# Ազգ
Azg

6-12 ՓԵՏՐՎԱՐ 2026 ՈՒՐԲԱԹ 004(5872)

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


## «Քրիստոնյա Հայ սփյուռքի իրավիճակը մեր օրերում» համաժողովն ավարտվեց Բուդապեշտում



Փետրվարի 2-ին Բուդապեշտում տեղի ունեցավ «Քրիստոնյա Հայ սփյուռքի իրավիճակը մեր օրերում» համաժողովը, որին մասնակցեցին 17 երկրների հայկական համայնքների պատվիրակներ: Եվս 8 երկրի համայնքային ներկայացուցիչների հրավերներ էին ուղարկվել, բայց պատվիրակները տարբեր պատճառներով չէին կարողացել ժամանել:

⇨7

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Բանակը թուլացնում են ներսից

Միայն բանակ չտեսած, զինծառայությունից խուսափած անձը կարող էր անել այն, ինչը արեց Նիկոլ Փաշինյանը՝ մեր զինյալ ուժերի կազմից հեռացնելով, ուղղակի ոչնչացնելով երեք տասնամյակ գոյություն ունեցող, ես կասեի՝ զինվորական ինստիտուցիոնալ մի կառույց՝ երեցների, գնդերեցների ջոկատը կամ վաշտը: Եվ միայն այն անձը, որի զինծառայությունը հատկանշվել է իր գնդի հրամանատարին դանակահարելու փաստով, կարող էր ընդառաջ գնալ 44-օրյա պատերազմը տանուլ տված, գերագույն գլխավոր հրամանատարի տիտղոս կրողի ցանկությանը, եւ առանց առարկության վավերացնել այն՝ որպես պաշտպանության նախարար: Շարժառի՞թը. մեր ազգային բանակում սակրավորների, սանիտարների ջոկատների նման՝ 30 տարի առաջ սպարապետ Վազգեն Սարգսյանի, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Ա.ի գրավոր փոխհամաձայնությամբ ստեղծված ու գործող, եկեղեցական համակարգի անդամ քահանաների ու սարկավագների մերժումը՝ միանալու, այսպես կոչված «Եկեղեցու բարենորոգման» շարժմանը: «Եթե չեք միանում մեզ, մեր նախաձեռնությանը, ապա ո՞րն է ձեր գոյության իմաստը մեր բանակում» նիկոլյան տրամաբանությամբ:

Մատենագետներին հայտնի է, որ մեր գնդերեցների համակարգը, իր նախնական ձեւի մեջ, ծնունդ է առել դեռեւս 5-րդ դարում, Ղեւոնդ Երեցի գլխավորությամբ, անշուշտ սպարապետ Վարդան Մամիկոնյանի եւ Սահակ Պարթեւ կաթողիկոսի համախոհությամբ: Ղեւոնդ Երեցը, որին այնքան ոգեւորությամբ է ներկայացրել Եղիշե պատմիչը, փաստորեն գլխավոր գաղափարախոսն էր Հայոց բանակի, մարտիկներին ոգեշնչողը, «մահ իմացյալ՝ անմահություն» կարգախոսի իրացնողը:

Այլ խոսքով, հիմնվելով գրավոր վկայությունների վրա, հայոց բանակի երեցների կամ ավագերեցների ջոկատը, համակարգը գոյություն է ունեցել դարեր շարունակ, մասնակցել ազգային ազատագրական բոլոր մարտերին, Կիլիկիայի բերդերի եւ ամրոցների պաշտպանությունից մինչեւ ավելի ուշ դարեր, մինչեւ Սարդարապատ, մինչեւ Արցախում, Սյունիքում եւ այլուր մղված ազգային ազատագրական պատերազմներ, ինքնապաշտպանական ոգորումներ: Մեր ժողովրդի դիմադրական ոգու գաղափարախոսական հիմքը Հայ եկեղեցին, նրա առաջնորդներն ու «զինվորյալ մանկունքն» են եղել: Եվ բնավ պատահական չէ, որ հայերիս դիմադրական շարժումների գլխավոր հենակետը եղել են մեր վանքերը, եկեղեցիները:

Այս տեսակետից մեր ազգը, մեր պաշտպանական համակարգում գնդերեցների ինստիտուտի գոյությունը բացառիկ երեւույթ չէ հին ու նոր եւ նորագույն աշխարհում: Եվրոպայում եւ Ամերիկայում այդ ինստիտուտը անգլերեն կոչվում է «չեփլըն», chaplain, ֆրանսերեն՝ chapelein, որը chapel՝ եկեղեցի, մատուռ բառահիմքն ունի՝ եկեղեցուն ծառայող:

Դա Արեւմուտքում շատ հարգված ինստիտուտ է, որը գործում է նաեւ զինծառայության ամենադժվար՝ ռազմանավերում, սուզանավերում, որտեղ ծովերի վրա կամ տակը ամիսներով մնալը պահանջում է դիմացկունություն, հոգեկան ամրություն, անձնամիջյան խաղաղ հարաբերություններ:

Հատկապես այս վերջին՝ բարոյահոգեբանական կայուն, բնականոն վիճակի պահպանումն անշուշտ խիստ կարեւոր է նաեւ մեր բանակային միավորումներում, որտեղ ծառայում են տասնյակ հազարավոր տաքարյուն տարիքի զինված տղաներ, որոնք, դժբախտաբար, երբեմն կրակում են միմյանց վրա, երբեմն էլ՝ սեփական ճակատին: Գնդերեցը միայն կնքելու, աղոթելու եւ օրհնելու պարտականություն չունի այստեղ, այլ նաեւ՝ հսկելու, ընկերական հարաբերությունները պահպանելու, ներքին ընդվզումները զսպելու առաքելություն: Դա շատ կարեւոր է նաեւ բանակում ծառայողների ծնողների, հարազատների եւ ընդհանրապես հասարակության ընկալումների տեսակետից, ինչը, խոստովանենք, դրական չէ: Շատ են զինծառայությունից խուսափելու դեպքերը: Պատճառը՝ անվստահությունը բանակի նկատմամբ:

Արդ, ո՞րն է պատճառը այս եւ նմանատիպ այլ որոշումների ու գործողությունների, որոնք, անկասկած, շարունակվելու են հետագայում՝ առավել ծանր հետեւանքներով: Խորհրդարանական առաջիկա ընտրություններում նորից հաղթելու մարմաջը, ամեն գնով իշխանության ղեկին մնալու մտասեւեռումը, idée fixe-ը: Հայ եկեղեցու դեմ չհայտարարված պատերազմը, եկեղեցականների հալածանքը, Արցախն ու արցախահայերին մոռացության տալու, գերեվարված եւ առեւանգված արցախյան ռազմաքաղաքական ղեկավարների բանտարգելումը անտեսելու քաղաքականությունը (ի դեպ, երեկ ադրբեջանական դատարան կոչված ծիծաղելի հիմնարկը նրանցից 3-ին ցմահ ազատազրկման դատապարտեց), Հայոց ցեղասպանության փաստը ուրանալը, մեր սիրելի լեռը՝ Արագածը մեր մյուս լեռան՝ Սրբազան Արարատին հակադրելու անհեթեթությունը, քաղաքական եւ հանրային գործիչների, ազատ խոսքի ջատագովների կալանավորումը շինծու մեղադրանքներով, այս բոլորի առկայության պատճառը առաջիկա ընտրություններն են, որոնց մոտենալուն ընդառաջ՝ թուրք-թաթարական տանդեմը արտակարգ աշխուժություն է ցույց տալիս եւ, մինչեւ անգամ, Էրդողանն է խոստանում 10 միլիոն դոլար նվիրել Նիկոլի տիկնոջը՝ «կարիքավորներին օգնելու համար», մինչ Եվրոմիությունն արդեն ուղարկել է 15 միլիոն եվրո, որը չգիտենք ո՞վ է ծախսելու եւ ի՞նչպես:

Այս ընթացքով, ինչպես տեսնում ենք, արտաքին ուժերը ավելի շահագրգռվածությամբ են մոտենում մեր ընտրություններին, քան մեր ընտրողները:

Եվ այս ֆոնին, վարչապետ Փաշինյանը ջանում է ավելի ինքնավստահ իրականացնել իր մտասեւեռումը՝ ներսից թուլացնելով ազգային մեր բանակը, որի գոյությունը խանգարում է իրեն, ինչպես նաեւ իրեն պաշտպանող արտաքին ուժերին:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Թռչելուց առաջ «հոպ» մի ասեք

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Աշխարհն՝ աշխարհով, մերոնք ընտրություններով, էլ ուրիշ թեմա չունեն: Իրանի շուրջ լարվածություն, օվկիանոսում անբարոյականության կղզու ու այնտեղ խառնակված աշխարհի ամենաառաջին դեմքերի խայտառակություն, Ադրբեջանում ցմահ եւ առավելագույն ժամկետներով մեր գերիների դատավճիռներ, Ադրբեջանը Նախիջեւանի սահմանադրությունից հանում է Մոսկվայի եւ Կարսի պայմանագրերին հղումը եւ Նախիջեւանն ավտոմատ դարձնում իր անբաժանելի սեփականությունն՝ արդեն սահմանադրական ամրագրմամբ: Մերոնցից ոչ մի ծպտուն չի լսվում՝ ո՛չ գերիների հետ կապված, ո՛չ Նախիջեւանի: Ֆրանսիայի սենատը միաձայն բանաձեւ պե՞տք է ընդունի՝ մեր գերիներին ազատ արձակելու կոչով: Գոնե ծրագրում ե՞ք Հայաստան ժամանող ԱՄՆ փոխնախագահի մոտ այդ հարցից խոսել: Կամ Մոսկվայում **Լավրովին** հանդիպած Հայաստանի ԱԺ նախագահը այդ հարցերի մասին խոսե՞լ է նրա հետ:

Կամ գոնե Նախիջեւանի հարցում մեր պատմաբանները ձայն հանեն, նստած են, ինչպես ձուկը ջրում՝ լուռ: Երկրի վարչապետն էլ «Զայեդ» մրցանակ է ստանում, **Ալիեւի** ձեռքը սեղմում ու մի կես հարց չի տալիս՝ մեր գերիներին ինչո՞ւ ես պահել, այ խաղաղության մարտիկ, կամ՝ ինչո՞ւ ես միջազգային իրավակարգը խախտում եւ Նախիջեւանի կարգավիճակ փոխում: Ո՛չ ուրիշ Հայաստան ունենք, որի տարածքը հարյուրհինգ տարի առաջ նվիրել են հարեւանին, ո՛չ էլ ուրիշ կառույց, բացի Հայաստանի կառավարությունից, որ նման հարցերին պարտավոր է արձագանքել: Գոնե քննարկման մակարդակով մի ծպտուն հանեք, չենք ասում՝ հասնենք Սասուն, մտնենք Վան: Միջազգային որեւէ ատյանում հարցադրում արեք, մեր խորհրդարանում որպես հատուկ հարց օրակարգ մտցրեք-քննարկեք:

Է՜, ինչի մասին եմ խոսում, մերոնք լրիվ խցանվել են ընտրական տուրեւառի մեջ, անհավանական, չլսված-չտեսնված դաշինքներ են մոգոնում, մեն-մի մտահոգություն ունեն՝ մաս փախցնել նոր ընտրություններում աճուրդի դրված խորհրդարան-տորթից, որպես բարեկեցության ստույգ աղբյուր: Ու մի խառնաշփոթ է սկսվել՝ տալիս են-առնում, ով՝ ում հետ դաշինքվի, ով՝ ում թեւի տակ մտնի: Մեկ էլ ու տեսնում ենք **Թեւանյանի** «Մայր Հայաստանն» է բանակցում **Ծառուկյանի** հետ՝ մի տես, է: Կամ ամեն տեսակ անարդարությունների դեմ պայքարողի համբավ ունեցող **Շանթ Հարությունյանի** որդու կուսակցությունը կարող է դաշնակցել նրանց հետ, ում դեմ պայքարում էր առաջ, ՀԱԿ-ն է հակվում՝ նախկիններին:

⇨2

## Հայ եկեղեցւոյ դէմ հալածանքը վարչապետին գլխաւորութեամբ կը գրաւէ միջազգային կառոյցներու լուրջ ուշադրութիւնը

***Աշխարհածանօթ կրօնական ազատութեան կազմակերպութիւնը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ դէմ հալածանքին մասին՝ փաստահաւաք առաքելութիւն մը իրականացուց՝ Ուաշինկթընի մէջ ընթացող Միջազգային Կրօնական Ազատութեան գագաթնաժողովին զուգահեռ, որուն հաջորդեց Երեւանի մէջ մամլոյ ասուլիս մը:***




Քրիստոնէական Համերաշխութեան Միջազգային Կազմակերպութեան պատուիրակութիւնը (CSI) օրերս այցելեց Հայաստան՝ նպատակ ունենալով իրականացնել փաստահաւաք առաքելութիւն մը՝ Հայաստանի կառավարութեան կողմէ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ դէմ ձեռնարկուած խստագոյն քայլերուն շուրջ:

Այցելութիւնը եզրափակուեցաւ Երեւանի «Իպիս Հոթէլ Սենթր»-ի մէջ տեղի ունեցած համատեղ մամլոյ ասուլիսով մը, Հայաստանի մէջ Քաղաքական Իրաւունքներու Կեդրոնին (ACPR) հետ, որ Երեւանի մէջ հաստատուած մարդկային իրաւունքներու ոչ կառավարական կազմակերպութիւն մըն է, որ պատրաստած է կառավարութեան հակա-եկեղեցական արշաւին վերաբերեալ համապարփակ իրաւական զեկոյց մը: Զուիցերիոյ խորհրդարանի անդամ Էրիխ Վոնթոպելը նոյնպէս մասնակցեցաւ այցելութեան եւ մամլոյ ասուլիսին:

⇨3

# Իրանի դեմ նոր պատերազմի կանխատեսելիությունը

## *Եւ Թրամփի սիմվոլիզմը*

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Իրանագետ

Թեեւ Իրանի նախագահը հրահանգել է վերսկսել բանակցությունները ԱՄՆ-ի հետ, սակայն մեր հիշողության մեջ դեռ թարմ է նախորդ տարվա հունիսին նույն օրակարգով մեկնարկած Իրան-ԱՄՆ երկխոսությունը եւ դրան հաջորդած՝ Իրանի դեմ Իսրայելի, իսկ հետագայում նաեւ ԱՄՆ-ի հարձակումը, որը հայտնի դարձավ «12-օրյա պատերազմ» անվանումով:

Արդյո՞ք կանխատեսելի է նույն սցենարի կրկնությունը: Եթե այո, արդյո՞ք հնարավոր է կանխատեսել նաեւ Իրանի դեմ ԱՄՆ-ի հարձակման ժամկետները:

Բնականաբար, նման կանխատեսումների համար հիմք են ծառայում հակամարտող կողմերի հնարավորություններն ու ռիսկերը, դաշնակից երկրների ներգրավվածության աստիճանը, միջազգային արձագանքը, ներքաղաքական մարտահրավերները եւ բազմաթիվ այլ գործոններ: Սակայն տվյալ դեպքում չի կարելի հաշվի չառնել նաեւ նախագահ **Դոնալդ Թրամփի** վարքագիծը բնորոշող առանձնահատկությունները:

Եթե Թրամփի խոստացված հարձակումն իրականացվի փետրվարի 1-ից 11-ն ընկած ժամանակահատվածում, հատկապես փետրվարի 11-ին՝ Իրանի Իսլամական հեղափոխության հաղթանակի տարեդարձին, դա չպետք է զարմացնի եւ կարելի է վերագրել Թրամփին բնորոշ վարքագծային օրինաչափություններին:

Թրամփը բազմիցս ցույց է տվել, որ խորհրդանիշերի եւ կարեւոր տարեթվերի նկատմամբ ունի առանձնահատուկ վերաբերմունք: Նա դրանք օգտագործում է քաղաքական ուղերձներ փոխանցելու, իր աջակիցների շրջանում վարկանիշը բարձր պահելու եւ հանրային գիտակցության մեջ կայուն պատմություններ ձեւավորելու համար:



Նրա գործողությունները հաճախ ուղեկցվում են հաշվարկված ժամանակացույցերով, բեմականացված դրսեւորումներով եւ թվային կամ պատմական հղումներով, որոնք լսարանին փոխանցում են լրացուցիչ իմաստային շերտեր՝ տեսանելի բովանդակությունից դուրս: Այս մոտեցումը նրա քաղաքական ոճի ու հաղորդակցության ռազմավարության անբաժանելի մասն է եւ, ըստ էության, «քաղաքական թատրոնի» մի ձեւ, որն ուղղված է պատկերների միջոցով սեփական մտադրությունները ներշնչելուն:

Այս վարքագծային օրինաչափությունը երեւում է բազմաթիվ օրինակներում, ինչպես ընդհանուր առմամբ, այնպես եւ հատկապես Իրանի հետ կապված դեպքերում:

Օրինակ՝ Թրամփի վարչակազմը, նրա նախագահության առաջին շրջանում՝ 2019 թվականի նոյեմբերի 4-ին, որը համընկավ Թեհրանում ԱՄՆ դեսպանատան գրավման եւ աշխատակիցների պատանդառության 40-րդ տարելիցին, հայտարարեց Իրանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետի եւ եւս ինը ֆիզիկական անձանց նկատմամբ պատժամիջոցներ սահմանելու մասին:

Նմանատիպ սիմվոլիկա էր բացահայտվում գեներալ **Ղասեմ Սոլեյմանիի** սպանությունից հետո: 2020 թվականի հունվարի 3-ին, ի պատասխան Իրանի պաշտոնյաների վրեժխնդրության սպառնալիքների, Թրամփը Թվիթթերում գրառեց. «Մենք թիրախավորել ենք իրանական մշակույթի համար մեծ նշանակություն ունեցող 52 կետ»՝ հղում կատարելով տարիներ առաջ Իրանում պատանդ վերցված 52 ամերիկացի դիվանագետների եւ դեսպանատան այլ աշխատակիցների թվին:

Վերջին շաբաթներին որոշ լրատվամիջոցներ նույնիսկ նշել են Վենեսուելայի նախագահ **Նիկոլաս Մադուրոյի** ձերբակալության օրվա համընկնումը գեներալ Ղասեմ Սոլեյմանիի սպանության տարելիցի հետ՝ հաշվի առնելով, որ երկու գործիչներն էլ որոշ առումներով համարվում են հակաամերիկյան առանցքի խորհրդանիշեր:

Այս օրինակները ցույց են տալիս, որ Թրամփի ռազմավարության մեջ թվերն ու տարեթվերը ծառայում են որպես քաղաքական ուղերձներ փոխանցելու արդյունավետ գործիք, եւ գործողությունների համադրումը պատմական իրադարձությունների հետ պատահական բնույթ չի կրում:

Սակայն այս օրինաչափությունը չի կարելի դիտարկել որպես միակ որոշիչ գործոն: Գործնական սահմանափակումներն ու իրատեսական հաշվարկները հաճախ կարող են գերակայել խորհրդանշական նախընտրություններին:

Կան հաղորդումներ, որոնք վկայում են, որ տարածաշրջանում ամերիկյան ուժերի լիարժեք լոգիստիկ պատրաստվածությունը դեռեւս ամբողջությամբ ապահովված չէ:

Բացի այդ, անցյալում եղել են դեպքեր, երբ ռազմական իրատեսությունը գերակայել է Թրամփի սիմվոլիզմին: Դրանցից մեկը 2019 թվականին Իրանի կողմից ամերիկյան անօդաչու թռչող սարքի խոցումից հետո ԱՄՆ-ի անմիջական ռազմական արձագանքի բացակայությունն էր, ինչը ցույց է տալիս, որ ռազմավարական հաշվարկներն ու ավելի մեծ ռիսկերից խուսափելը երբեմն առաջնահերթ են եղել խորհրդանշական քայլերից:

Եղել են նաեւ դեպքեր, երբ Թրամփը ստիպված է իր հաշվարկներում ներառել այլ գործոններ, այդ թվում՝ տարածաշրջանային դաշնակիցների հետ համակարգումը եւ ներքին քաղաքական նկատառումները, մասնավորապես Կոնգրեսի միջանկյալ ընտրությունների ժամկետների մոտեցումը:

Հետեւաբար, թեեւ պատմական սիմվոլիզմը Թրամփի գործողությունների վերլուծության մեջ կարեւոր գործոն է, այն չի կարող լինել միակ չափանիշը այնպիսի ծանր հետեւանքներ ունեցող որոշումների դեպքում, ինչպիսին պատերազմի սկիզբն է:

Այդուհանդերձ, նշված ժամանակահատվածում հարձակման իրականացումը լիովին բացառել չի կարելի:

Վերջապես, հարձակման մասին որոշում կայացնելիս Թրամփը պետք է հաշվի առնի նաեւ Իրանի Գերագույն առաջնորդ **Ալի Խամենեիի** վերջին հայտարարություններից մեկը, ըստ որի՝ Իրանի դեմ ռազմական որեւէ գործողություն կարող է հանգեցնել լայնամասշտաբ տարածաշրջանային բախման:

Այսպիսով, վերջնական հարցը մնում է բաց. որոշում կայացնելիս կհաղթանակի՞ զինվորականների ռազմավարական իրատեսությունը Թրամփի անձնական սիմվոլիզմի նկատմամբ, թե՞ վերջինս կկարողանա պարտադրել իր սեփական տեսլականը:

# Թռչելուց առաջ «հոպ» մի ասեք

⇨1 Ու այսպես ամեն տեսակի անհավանական դաշինք կստեղծենք շուտով՝ վերստին ապացույցի տեղ չթողնելով մեր բազմիցս բարձրաձայնած այն մտքի առումով, որ մեր ընդհանրական քաղաքական դաշտի միակ խնդիրը միշտ եղել է ոչ թե երկրի փրկությունը, այլ սերնդափոխությանը խանգարելը եւ քաղաքական մատրիցան ներքին ռակիրովկաներով նույն տնտեսական լծակատերերի ձեռքում պահելը՝ լինի դա իշխանական, թե ընդդիմադիր ֆորմատներով:

Ինչ դաշինք էլ կազմեն՝ այս գլխավոր խնդիրն է լուծվելու, որ հանկարծ առաջ չգան այնպիսի անկանխատեսելի նոր ուժեր, որոնք գծված ներհայկական աշխարհակարգը փոխեն: Իսկ թե դրա տերը էլի ներկա իշխանությունը կամ ներկա ընդդիմության ինչ-որ թեւ կլինի՝ դա երկրորդական է, չնայած՝ ներսում դա կենաց-մահու պայքարի է վերածվելու: Զարմանահրաշ դաշինքների մասին դեռ կգրենք, այսօր նկարագրենք օրենսդրության ընձեռած հնարավորությունները՝ դաշինքներ ստեղծելու, դաշինքով կամ կուսակցությամբ ընտրության գնալու եւ, առհասարակ, առկա օրենսդրական հիմքով խորհրդարան ծագրելու մասին:

Ներկա, փոփոխված ընտրական օրենսգրքով կուսակցությունների համար անցողիկ շեմը 4 տոկոս է, երկու կուսակցությամբ դաշինքը խորհրդարան անցնելիս 8 տոկոս քվե պետք է հաղթահարի, երեքով դաշինքն՝9 տոկոս, չորս եւ ավելի կուսակցությունների դեպքում՝ 10 տոկոս:

Ինչպես նկատեցիք՝ դաշինքներով ավելի դժվար է լինելու խորհրդարան անցնել, դաշինքով ընտրական մրցակցությունն ավելի բարդ է: Սա հատկապես այն փոքր ուժերին է վերաբերում, որոնք առանձնապես վարկանիշ չունեն հանրության մեջ, եւ եթե հույսը դրել են միավորվելով խորհրդարան անցնելու վրա՝ նրանք հազիվ թե հայտնվեն այնտեղ բարձր անցողիկ շեմի պատճառով: Այսինքն՝ օրենսդրությամբ էլ նորերի, փոքրերի ճանապարհը փակվում է, եթե նրանք ուզում են միավորվելու հոգեբանական գործոնը գործադրել ընտրողի վրա:

Այդ՝ միավորվելով ընտրողին գրավելու գործոնը փաստորեն լավ կաշխատի մեկ-երկու մեծ միավորի դեպքում՝ ՔՊ-ի, **Սամվել Կարապետյանի** ստեղծած ուժի առանցքի, **Ռոբերտ Քոչարյանի** շուրջ միավորվածների: Օրենսդիրը, իսկ ավելի ստույգ՝ իշխող քաղաքական ուժը, որ այս փոփոխություններն արել է, հենց քաղդաշտն ուսումնասիրելով է սա արել, մի տեսակ իր համար ընդդիմախոսներ կամ մրցակիցներ նշանակելով մեկ-երկու ուժի: Այսինքն՝ փոքր ուժերը կա՛մ պետք է գնան մեկ-երկու մեծ միավորի թեւի տակ՝առավելագույնը երեք ուժով խորհրդարան գծելու համար, որոնց մեջ ով ասես միավորված կլինի, կա՛մ գուցե աշխատի երկրորդ տարբերակը, որը, զարմանալիորեն, էլի ներկա իշխանության սրտով կարող է լինել: Այն է՝ չորս տոկոսը հաղթահարած տասնյակ կուսակցությունների կարկատան- խորհրդարան, որոնցից յուրաքանչյուրի հետ բանակցություններով ավելի շատ իշխանությունը շանս կունենա մեծ կոալիցիա կազմելու, քան թե խորհրդարան անցնելիք մեկ-երկու ընդդիմադիր ուժերը:

Բոլոր դեպքերում անզեն աչքով էլ երեւում է, որ ընտրական օրենսգրքի փոփոխությունները մտածված են արված, իշխանության բացատրությամբ ժողովրդավարություն ապահովելու եւ բոլոր միավորների համար հավասար պայմաններ ստեղծելու համար, իսկ նրա ընդդիմախոսների կարծիքով՝ ձայներ փոշիացնելու եւ իշխանության համար ավելի կոմֆորտ վիճակ ստեղծելու, քանի որ ինքնին պարզ է, որ դաշինքների համար նախատեսված բարձր շեմը շատ կուսակցությունների մղելու է մենակ մասնակցելու ընտրություններին: Բնականաբար, նրանցից շատերը չեն հաղթահարելու անցողիկ շեմը, իսկ նրանց տոկոսները գնալու են ավելի բարձր քվե հավաքած ուժին:

Այստեղ է գաղտնիքը: Չնայած իշխանության ցածր վարկանիշին, բոլոր տեսակի հարցումներով՝ նրա վարկանիշը ընդդիմադիր բոլոր միավորներից մի ճըռթ ավելի է:

Մենք արհեստական բանականությանը հարցում արեցինք Հայաստանի քաղաքական ուժերի վարկանիշների մասին: Նրա պատասխանները, որ բնականաբար համացանցում հրապարակված նյութերի վերլուծության արդյունքում են ձեւավորվել, այսպիսի պատկեր են գծում: ՔՊ-ն այսօրվա վիճակով մնում է ընտրապայքարի գլխավոր ֆավորիտը, չնայած նրա վարկանիշը բարձր չէ՝ տարբեր հարցումներով տատանվում է 11.3-17.3% եւ 16.5 - 17.3 սահմաններում, ու դեռ հնարավոր է իջնի էլ: Սամվել Կարապետյանի ստեղծած առանցքն, ըստ ԱԲ-ի, հավակնում է երկրորդ ֆավորիտը լինել, տարբեր հարցումներով հետեւյալ երկու վարկանիշային պատկերն է ԱԲ-ն ցույց տալիս՝12% եւ 13.4 %, կամ միգուցե երկրորդ տեղի համար պայքարը կարապետյանականները կկիսեն Ռոբերտ Քոչարյանի առանցքի շուրջ ստեղծված դաշինքի հետ (այս դաշինքի ցածր վարկանիշ է ավելի նշվում՝ նկատի առնելով, որ միավորման գործընթաց սկսելու դեպքում դաշինքի քվեն կավելանա):

Մյուս բոլոր հնարավոր դաշինքների համար ԱԲ-ն կանխատեսում է վեց-յոթ տոկոսանոց կամ ավելի ցածր վարկանիշ, որն, ի դեպ, կարող է փոփոխվել՝ իշխանության ընդդիմախոսների ոչ ստանդարտ քայլերի արդյունքում:

Ընդ որում՝ հենվելով տարբեր հարցումների արդյունքների վրա՝ ԱԲ-ն ընտրողների մեծ մասնակցություն չի կանխատեսում, քանի որ հարցվողների կեսից ավելին բոլոր հարցումներում նշել են, որ չեն վստահում որեւէ քաղաքական ուժի, իսկ ընտրություններին քվեարկելու գնալու մտադրություն հայտնել են հարցվածների առավելագույնն երեսուն տոկոսը:

Այնպես որ՝ երբ որեւէ քաղաքական ուժ հայտարարում է, որ ինքն է հենց հաղթելու, ինքն է լինելու առաջատարը, ԱԲ-ի հարցման արդյունքում ստացված պատասխաններով մեր վերծանությունը սա է՝ գետի վրայով թռչելուց առաջ «հոպ» մի ասեք:

⇨1 Ասուլիսը վարեց **Լիֆա Թումանեանը**: Անգլերէն լեզուով ընթացող մամլոյ ասուլիսը տեղւոյն վրայ հայերէնի կը թարգմանէր՝ **Նայիրի-Կրէյս Պարտաքճեանը**:

Մամլոյ ասուլիսը ուղիղ հեռարձակումով (կապը այստեղ՝ https://www.youtube.com/watch?v=oWFUP7VaMn0) ցուցադրուեցաւ 3 փետրուարին:

CSI-ի փաստահաւաք առաքելութիւնը կայացաւ այն ժամանակաշրջանին, երբ կրօնական ազատութեան փորձագէտները եւ ոչ կառավարական կազմակերպութիւնները հաւաքուած էին Ուաշինկթընի մէջ՝ Միջազգային Կրօնական Ազատութեան գագաթնաժողովին համար, եւ ԱՄՆ-ի փոխ նախագահ Ճէյ. Տի. Վանսի փետրուար ամսուան ընթացքին Հայաստան եւ Ազրպէյճան կատարելիք այցելութենէն առաջ:

*«Կրօնական ազատութեան պայմանները կտրուկ կերպով վատթարացած են Հայաստանի մէջ՝ այս ամրան սկիզբէն ի վեր»,* յայտնեց **Ժոէլ Վելտկամփ**, CSI-ի փաստաբանական բաժանմունքի տնօրէնը: «*Մենք յոյս ունինք, որ այս այցելութիւնը ուշադրութեան կեդրոն կը բերէ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ դէմ ուժգնացող հալածանքը՝ գագաթնաժողովի մասնակիցներուն համար*»:

### Պատմութեան Համառօտ Ակնարկ

Յունիս 2025-էն ի վեր, Հայաստանի կառավարութիւնը բանտարկած է չորս եպիսկոպոս եւ մէկ քահանայ: Տասնեակ ուրիշներ նոյնպէս ձերբակալուած են, ներառեալ՝ եկեղեցական աշխատողներ, ձերբակալուած հոգեւորականներու փաստաբաններ, հոգեւորականներու ընտանիքի անդամներ եւ եկեղեցւոյ հանրային կողմնակիցներ: Հայաստանի վարչապետ **Նիկոլ Փաշինեանը** հրապարակայնօրէն խոստացած է հեռացնել համայն աշխարհի Հայ եկեղեցւոյ գլուխը՝ Նորին Սրբութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր պաշտօնէն եւ փոխարինել զինք պետութեան կողմէ նշանակուած յանձնախումբի մը կողմէ ընտրուած դէմքով մը:

Հայաստանի մէջ տիրող անապահով վիճակին պատճառով, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին վերջերս ծրագրած է իր Եպիսկոպոսական ժողովը 16-19 փետրուարին կայացնել Աւստրիոյ մէջ, Հայաստանի փոխարէն:

Նոյեմբեր 2025-ին, Հայաստան կատարած նախորդ այցելութեան ընթացքին, Հայաստանի Հանրապետութեան առաջին «Աղօթքի Նախաճաշ»-ին հետ միասին, CSI-ի պատուիրակութիւնը հանդիպումներ ունեցաւ տեղական քաղաքացիական հասարակութեան առաջնորդներուն հետ, ինչպէս նաեւ ձերբակալուածներուն ընտանիքի անդամներուն եւ փաստաբաններուն հետ:

# Հայ եկեղեցւոյ դէմ հալածանքը վարչապետին գլխաւորութեամբ կը գրաւէ միջազգային կառոյցներու լուրջ ուշադրութիւնը

«***Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հալածանքը Հայաստանի կառավարութեան կողմէ՝ գալիք օրերու համար սարսափելի նշան մըն է ոչ միայն հայ ժողովուրդին համար, այլ նաեւ՝ միջազգային հասարակութեան բոլոր անդամներուն, որոնք կը գնահատեն կրօնական ազատութիւնը***», մեկնաբանեց Քրիստոնէական Համերաշխութեան Միջազգային Կազմակերպութեան նախագահ Դոկտ. **Ճոն Էյպնըր**: *«Եթէ ԱՄՆ-ի դաշնակից կառավարութիւն մը կրնայ այդքան բացէ ի բաց փորձել վերահսկողութիւն հաստատել աշխարհի հնագոյն եկեղեցիներէն մէկուն վրայ՝ առանց միջազգային հակազդեցութեան, ապա անիկա մռայլ նախադէպ մը պիտի ստեղծէ ամբողջ աշխարհի մէջ գտնուող բռնապետական կառավարութիւններուն համար»:*

«***Մենք կը յորդորենք Ուաշինկթընի մէջ տեղի ունեցող IRF գագաթնաժողովի մասնակիցներուն, ինչպէս նաեւ փոխնախագահ Վենսին՝ միջամտել հայկական իշխանութիւններուն մօտ, որպէսզի վերջ տան իրենց արշաւին՝ ուղղուած Հայ եկեղեցւոյ դէմ, եւ ազատ արձակեն այն մարդիկը, որոնց ձերբակալած են այդ արշաւին մաս կազմելով***», եզրափակեց ան:

CSI-ի պատուիրակութիւնը ՀՀ պետական իշխանութիւններուն հետ ունեցած դժուար բանակցութիւններէն ետք առիթը ունեցաւ հանդիպելու բանտարկուած **Բագրատ Արքեպիսկոպոս Գալստանեանին** հետ, որ իրենց յանձնեց իր կողմէ ստորագրուած նամակներ, որոնք ուղղուած էին Ուաշինկթընի մէջ տեղի ունեցող IRF գագաթնաժողովի մասնակիցներուն, ինչպէս նաեւ ԱՄՆ-ի փոխնախագահին:



***«Բագրատ սրբազանը կը պահուի նոյն խուցին մէջ, ուր 1937-ին խորհրդային միութեան համապատասխան համակարգին կողմէ սպաննուեցաւ Բագրատ Եպիսկոպոս Վարդազարեանը».*** մամլոյ ասուլիսին արտասանած իր խօսքին մէջ ի միջի այլոց ըսաւ CSI-ի նախագահը:

*«Եկած ենք հետեւողական աշխատանք կատարելու՝ որպէս մեր փաստահաւաք աշխատանքին շարունակութիւնը, որ իրականացուցինք նոյեմբերին: Հոս ենք՝ հասկնալու համար, թէ ճգնաժամը եկեղեցիին եւ պետութեան միջեւ ինչպէս փոխուած է»*,- Քրիստոնէական Համերաշխութեան Միջազգային Կազմակերպութեան (Christian Solidarity International, CSI) եւ Քաղաքական Իրաւունքներու Հայկական կեդրոնի (ACPR) կազմակերպած մամուլի ասուլիսին ընթացքին յայտարարեց CSI-ի նախագահ, յայտնի իրաւապաշտպան **Ճոն Էյպնըրը**: Ան յայտնեց, թէ այս այցելութեան ընթացքին հանդիպած են մարդկային իրաւունքներու պաշտպաններու, փաստաբաններու հետ, հանդիպած են Կաթողիկոսին՝ Մայր Աթոռին մէջ. *«Վճռակամ կեցած է պաշտպանելու իր հօտը եւ ազգը: Այսօր առաւօտեան այցելեցինք Բագրատ սրբազանին՝ բանտին մէջ: Ուրախ էինք Բագրատ սրբազանը տեսնել քաջ առողջութեամբ»*:

*«Վարչապետին հետ փաստաթուղթ ստորագրելէ քանի մը օր առաջ մեզի հետ հանդիպման ընթացքին Արցախի թեմի առաջնորդը կ՚ըսէր՝ Արցախի հարցը փակուած չէ».* իր խօսքին մէջ շարունակեց վկայել յայտնի իրաւապաշտպան **Ճոն Էյպնըրը** եւ շարունակեց յայտնելով, որ *«Այո, մեր հանդիպումէն քանի մը օր ետքն էր, որ վարչապետին հետ փաստաթուղթ ստորագրեցին: Ան որեւէ ձեւով դէմ չարտայայտուեցաւ Կաթողիկոսին: Ըսաւ, որ Ղարաբաղի հարցը փակուած չէ: Ասիկա Արցախի արքեպիսկոպոսին ըսածն էր փաստաթուղթը ստորագրելէ քանի մը օր առաջ»*, հարցումի մը պատասխանելով շեշտեց Էյպնըրը:

Իսկ այն հարցումին, թէ Նիկոլ Փաշինեանի կողմը անցած 10 հոգեւորականներուն հետ հանդիպա՞ծ են, հակառակ պարագային ինչպէ՞ս կրնան խօսիլ առարկայական փաստահաւաք առաքելութեան մասին, ան պատասխանեց. *«Մենք չենք հանդիպած այն տասը հոգեւորականներուն հետ, որոնք Կաթողիկոսին դէմ դուրս եկած են: Մենք Նոյեմբերին Արցախի արքեպիսկոպոսին հետ ենք հանդիպած: Թէեւ մենք անձնական հարցազրոյց չենք ունեցած ՀՀ վարչապետին հետ, Նոյեմբերին աղօթքի նախաճաշին մասնակցեցանք: Մենք լսեցինք վարչապետին եւ ուրիշներուն, մենք ինքներնիս հետազօտութիւն կը կատարենք անոնց ելոյթներուն, կ՚ուսումնասիրենք հասկնալու՝ «Իրական Հայաստան»-ի գաղափարախօսութիւնը ո՛րն է: Ուստի կարելի է ըլլալ առարկայական՝ լսելով բոլոր կողմերը, եւ մենք ասիկա կ՚ընենք»*:

Ինչ կը վերաբերի Արցախի թեմին, Ճոն Էյպնըրը շեշտեց՝ *«մարդկային իրաւունքները չեն կրնար չեղարկուիլ երբեք»*:

*«Եթէ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին հիմնարար իրաւունքները կրնան փակուիլ այսօր, ապա ձեր՝ մարդկային իրաւունքները կրնան փակուիլ վաղը, եւ կրնան փակուիլ պետութեան կողմէ»*,- ըսաւ ան:

Դոկտ. Էյպնըրը պատասխանելով ասուլիսին ներկայ, «Զարթօնք» օրաթերթի խմբագիրին հարցումին, թէ ի՞նչ ունի ըսելիք այն զարգացումին մասին, որ Հայաստանի իշխանութիւնները, երկիրը լքելու արգելանք կիրարկեցին 6 եպիսկոպոսներու հետ, որոնք պէտք է յառաջիկայ օրերուն մասնակցէին Գարեգին Բ. Վեհափառին հրաւէրով Աւստրիոյ մէջ կայանալիք Եպիսկոպոսաց ժողովին, ըսաւ. *«Ասիկա արդէն գագաթնակէտն է մինչեւ հիմա պատահած բռնաճնշումներուն, որ անպայմանօրէն կը խաթարէ Հայաստանի իշխանութիւններուն վարկը յաչս միջազգային ընտանիքին»*: Էյպնըրը շարունակեց իր պատասխանը, շեշտելով, որ Մայր Աթոռին կը մնայ իր նշեալ ժողովը իրագործելու համար սոյն բռնաճնշումները շրջանցող խելամիտ միջոցներ գտնել:



**«ՀՀ-ի մէջ ամենաբարձր մակարդակով կ ըսուի, թէ ԼՂ հարցը փակուած է. մենք այդպէս չենք կարծեր».** իր կարգին, ի միջի այլոց, ըսաւ ասուլիսին մասնակից զուիցերիացի խորհրդարանականը:

*«ՀՀ-ի մէջ ամենաբարձր մակարդակի վրայ լսելի կ ըլլայ, թէ ԼՂ հարցը փակուած է: Մենք այլ կերպ կը նայինք հարցին: Մեր կարծիքով, քանի դեռ տեղահանուած անձինք չեն վերադարձած իրենց տուները եւ չեն կրնար վերադառնալ, գործը փակուած չէ եւ չպէտք է փակուած ըլլայ* մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարեց Զուիցերիոյ Ազգային Խորհրդարանի անդամ **Էրիխ Վոնտոբելը**: Ըստ իրեն, տեղահանուած անձանց վերադարձը պէտք է կայուն խաղաղութեան համաձայնագրի անբաժանելի մասը կազմէ: Ան նշեց, որ իրենք ամէն բան կ ընեն, որպէսզի հայերուն վերադարձի հարցը բերեն միջազգային ուշադրութեան կեդրոնը: Ան պատմեց, որ 2024 թուականի Հոկտեմբերին հանդիպած է ԼՂ-էն տեղահանուած անձանց հետ Երեւանի մէջ. *«Անոնց հարցուցի երեք բան՝ ի՞նչ պատահեցաւ 2023 թուականի սեպտեմբերին, երկրորդը՝ ի՞նչ կ ուզէք հիմա դուք, երրորդը՝ ինչպէ՞ս կարելի է հասնիլ այդ նպատակին»*: Անոնց յստակ առաջարկն էր՝ կլոր սեղան Ազրպէյճանի եւ Արցախի միջեւ՝ միջազգային հարթակի վրայ: Այդ հանդիպումին խոստացայ, որ կը վերադառնանք Զուիցերիա, եւ մենք պիտի փորձենք բան մը ընել:

*«2023 թուականի սեպտեմբերին Արցախի մէջ պատահածը արդար չէր, ճիշդ չէր»*,- լրագրողի մը հարցումին ի պատասխան ըսաւ Զուիցերիայի Ազգային Խորհուրդի անդամը:

*«Մարդիկ զրկուեցան իրենց հիմնարար իրաւունքէն՝ իրենց հայրենիքը վերադառնալու իրաւունքէն: Ասիկա մարդու իրաւունքներու կոպիտ ոտնահարում մըն էր, սխալ էր: Եւ հիմա, 2.5-3 տարի ետք, եթէ անգամ մէկ մարդ յայտարարէ, թէ «հարցը փակուած է», ասիկա բան մը չի փոխեր իրականութեան մէջ: Այդպիսի յայտարարութիւնները չեն կրնար փոխել փաստերը, չեն կրնար հերքել տեղի ունեցածը, արդարացնել այն, ինչ որ եղած է սխալ եւ նոյնիսկ՝ քրէական: Պարզապէս հարցուցէք տեղահանուած մարդոց՝ արդեօք իրենց համար այս հարցը փակուա՞ծ է: Անոնց պատասխանը բնականաբար մէկն է՝ ո՛չ: Անոնք կ ուզեն վերադառնալ, քանի որ անոնց եկեղեցիները հոն են, վարժարանները հոն են, գերեզմանատուները հոն են: Իսկ այս ժողովուրդին համար գերեզմանատուները յիշողութիւն են, շատ կարեւոր են: Ուստի պարզապէս ըսել, թէ հարցը փակուած է, անկարելի է, այդպէս չի կրնար ըլլալ:*

*Ասիկա է պատճառը, որ մենք ունինք Լեռնային Ղարաբաղի հարցով Զուիցերիական Խաղաղութեան Յանձնաժողով: Քանի դեռ վստահ ենք եւ կը հաւատանք, որ այս հարցը փակուած չէ, մենք պիտի շարունակենք պայքարիլ անոր համար: Մենք կը տեսնենք տեղահանուած մարդիկը, կը լսենք անոնց ձայնը, եւ հէնց անոնց խօսքն է այն շարժառիթը, որ մեզ առաջ կը տանի»*,- ըսաւ Էրիխ Վոնտոբելը:

«Զարթօնք» օրաթերթի խմբագիրը իր հարցը ուղղեց պարոն Վոնտոբելին, ըսելով որ. *«Միեւնոյն քրիստոնեայ եւ ժողովրդավար Եւրոպան էր, որ 110 տարի առաջ մատը մատին չզարկաւ արգելք հանդիսանալու, որ թուրքը իմ նախահայրերը դուրս չքշէ քրիստոնեայ Կիլիկիոյ մէջ գտնուող իրենց պապենական գիւղէն, որուն իբրեւ արդիւնք իմ հայրը, ես եւ զաւակս ծնանք Լիբանան, մինչ պէտք է ծնէինք մեր պապենական հողերուն վրայ, որ օր ցերեկով զաւթուեցաւ թուրքերուն կողմէ»*:

⇨6

# Մելինե Մեսրոպյան. **Հայկական հետքեր ճապոնական արխիվներում եւ նոր բացահայտումներ Դիանա Աբգարի մասին**

**ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ**

*Սկիզբը` նախորդ համարում*

**-Վերջին տասնամյակում Դիանա Աբգարը կարծես դարձավ մի տեսակ նորաձեւ անուն, պատեհ թե անպատեհ առիթներով հոլովում են նրա անունը` առանց համակողմանի ուսումնասիրելու: Մասնավորապես շահարկվում է նրա` աշխարհում առաջին կին դեսպան լինելու իրողությունը: Սակայն հայտնի է, որ սակավին 17-րդ դարում եղել են կին դեսպաններ` ի դեմս հոլանդուհի Բարտոլդա վան Սվիտենի եւ շվեդուհի Կատարինա Ստոպիանի: Բայց մենք հպարտությամբ կարող ենք ասել, որ Դիանա Աբգարը եղել է դիվանագիտական գործունեությամբ զբաղված առաջին հայուհին:**

-Դիանային հաճախ բնութագրում են որպես «աշխարհի առաջին կին դիվանագետ» կամ «առաջին կին դեսպան». պնդումներ, որոնք գիտական քննությանը չեն դիմանում:

Լավ եմ հիշում իմ առաջին հետազոտական ծրագրի ներկայացումը, երբ ես նույնպես օգտագործեցի այդ հանրահայտ ձեւակերպումները: Արձագանքն անմիջական էր. զարմացած հայացքներ, ապա` դասախոսներիս սուր եւ լիովին հիմնավորված հարցերը: Շուտով պարզ դարձավ, որ նման եզրերը չեն կարող հեշտորեն օգտագործվել: Այդ հարցերն ինձ ստիպեցին վերադառնալու աղբյուրներին` ոչ միայն պատմական արխիվներին, այլեւ Դիանայի ժամանակաշրջանի միջազգային իրավունքին: Այդ պահը դարձավ շրջադարձային իմ հետազոտության համար եւ պարտադրեց հստակեցնել սահմանումները, իրավական շրջանակները եւ պատմական համատեքստը` նախքան դիվանագիտական կարգավիճակի վերաբերյալ որեւէ պնդում անելը:

Քսաներորդ դարի սկզբի միջազգային իրավունքի տեսանկյունից Դիանային չի կարելի բնութագրել որպես դիվանագետ պաշտոնական իմաստով: Մինչեւ 1961 եւ 1963 թվականների Վիեննայի կոնվենցիաները դիվանագիտական եւ հյուպատոսական դերերը կարգավորվում էին սովորութային իրավունքով: Թեեւ սահմանումներն այն ժամանակ այնքան հստակ ձեւակերպված չէին, որքան այժմ, այնուամենայնիվ, գոյություն ուներ հստակ տարբերակում դեսպանների եւ հյուպատոսների միջեւ, եւ դիվանագիտական կարգավիճակը կախված էր ընդունող պետության ճանաչումից:

Դիանան նշանակվել էր Հայաստանի Առաջին Հանրապետության պատվավոր հյուպատոս` նորանկախ եւ քաղաքականապես խոցելի պետության առաքմամբ: Ժամանակաշրջանի միջազգային իրավունքի համաձայն, պատվավոր հյուպատոսները, հատկապես նրանք, ովքեր ապրում էին ընդունող երկրում եւ չէին վարձատրվում նշանակող կառավարության բյուջեից, չէին համարվում դիվանագետներ, նույնիսկ այն դեպքերում, երբ իրականացնում էին դիվանագիտական գործառույթներ: Աբգարի նշանակումը պաշտոնապես չէր ճանաչել ճապոնական կառավարությունը, հետեւաբար նրան պաշտոնական կարգավիճակ չեն շնորհել:

Միեւնույն ժամանակ անժխտելի է, որ Դիանան գործնականում իրականացրել է դիվանագիտական աշխատանք: Մոտավորապես 1910-ից մինչեւ 1920-ականների վերջը նա բանակցել է կառավարությունների հետ, նամակագրություն է վարել միջազգային կազմակերպությունների հետ, պաշտպանել է փախստականների շահերը եւ հանդես է եկել որպես հայերի ներկայացուցիչ ձայն` հաճախ առանց ինքնիշխան պետության հովանու: Հենց այդ պատճառով էլ նրա ծոռնուհի **Միմի Մալայանը** հետագայում իր վավերագրական ֆիլմը վերնագրեց «Պետություն չունեցող դիվանագետը»` ներկայացնելու համար մի կնոջ, որը դիվանագիտական գործունեություն էր իրականացնում առանց պետական պաշտպանության` պաշտոնական նշանակումից առաջ եւ հետո:



Արդեն Դիանայի կենդանության օրոք տարբեր երկրների կանայք սկսել էին ամբողջապես կամ մասամբ հայտնվել դիվանագիտական կամ կիսադիվանագիտական դերերում: Առանց շատ հեռու գնալու` 1910-ականների վերջին եւ 1920-ականների սկզբին ժամանակի մամուլում գրում էին այնպիսի գործիչների մասին, ինչպիսիք էին Ադելաիդ Լիվինգսթոնը, Ռոզիկե Շվիմմերը, Նադեժդա Ստանչովան եւ Լյուսիլ Աչերսոնը, որոնք կատարել են դիվանագիտական գործառույթներ: Այս համատեքստը հստակ ցույց է տալիս, որ Դիանա Աբգարին որպես «առաջին կին դիվանագետ» կամ «առաջին կին դեսպան» ներկայացնող պնդումները չեն համապատասխանում ժամանակաշրջանի իրավական եւ քաղաքական իրողություններին:

Այն, ինչ կարելի է վստահությամբ եւ հպարտությամբ արձանագրել, այն է, որ Դիանա Աբգարը եղել է առաջին հայ կինը, որը զբաղվել է շարունակական դիվանագիտական գործունեությամբ: Նրա աշխատանքը ներկայացնում է հայերի վաղ եւ նշանակալի մասնակցության օրինակ միջազգային մարդասիրական եւ դիվանագիտական ցանցերում: Ժամանակի իրավական, քաղաքական եւ պատմական պայմաններում նրան հասկանալը ոչ միայն չի նվազեցնում նրա նշանակությունը, այլեւ, հակառակը, թույլ է տալիս գնահատել նրա գործողությունների ինքնատիպությունն ու խիզախությունը` առանց հենվելու առասպելականացված կոչումների վրա:

**-Անդրադառնանք մեկ այլ վիճելի հարցի: Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ 1920 թվականի հուլիսի 22ին Դիանա Աբգարը նշանակվել է Հայաստանի առաջին հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ` պատվավոր հյուպատոս: Պատմական իրադարձությունների բերումով այս նշանակումը եղել է միակողմանի, 1920-ի վերջին Հայաստանի Հանրապետությունը դադարել է գոյություն ունենալ, եւ Դիանա Աբգարը Ճապոնիայի կառավարության կողմից այդպես էլ պաշտոնապես չի ճանաչվել իբրեւ Հայաստանի հյուպատոս: Սակայն, կարծում եմ, այս դրվագը չի նսեմացնում Դիանա Աբգարի` Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոս նշանակվելու իրողությունը:**

-Լիովին համաձայն եմ, որ Ճապոնիայի կառավարության կողմից պաշտոնական ճանաչման բացակայությունը ոչ մի կերպ չի նվազեցնում Դիանա Աբգարի` Հայաստանի պատվավոր հյուպատոս նշանակման պատմական նշանակությունը: Ընդհակառակը, հենց այդ նշանակումն ինքնին ուշագրավ է, քանի որ այն փաստացիորեն հաստատում է ավելի քան մեկ տասնամյակ շարունակ իրականացված մարդասիրական եւ քաղաքական գործունեությունը, որը նա արդեն ծավալել էր հայ ժողովրդի անունից:




Միեւնույն ժամանակ այս դրվագը պահանջում է զգույշ մեկնաբանություն: Քսաներորդ դարի սկզբին դիվանագիտական եւ հյուպատոսական նշանակումները գործում էին բարդ իրավական եւ քաղաքական շրջանակում, հատկապես նորաստեղծ պետությունների համար, ինչպիսին էր Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Աբգարի նշանակումը միակողմանի քայլ էր քաղաքականապես խոցելի եւ միջազգային առումով անապահով մի հանրապետության կողմից, որի գոյությունը մշտապես վտանգի տակ էր: 1920 թվականի վերջին Հայաստանի Հանրապետությունը դադարեց գոյություն ունենալ, ինչի արդյունքում այլ պետությունների կողմից ճանաչումը դարձավ առավել եւս անհավանական: Ինչպես նշել է **Ռիչարդ Հովհաննիսյանը**, այդ ժամանակաշրջանում հայկական կառավարության կողմից նշանակված ներկայացուցիչներից ոչ մեկին չճանաչեցին ընդունող պետությունները: Այս ավելի լայն համատեքստում դիտարկելիս` Աբգարի դեպքը բացառիկ չէր, այլ մաս էր կազմում այն ընդհանուր օրինաչափության, ինչը բնորոշ էր հայկական դիվանագիտական ներկայացուցիչներին: Սա հնարավորություն է տալիս համեմատական ուսումնասիրությունների` պարզելու, թե տարբեր կառավարություններ ինչպես են արձագանքել նման նշանակումներին կամ ինչու են հրաժարվել արձագանքելուց:

Այս չճանաչումը պատմականորեն հասկանալի է: Այն արտացոլում է աշխարհաքաղաքական անկայունությունը, անորոշ սահմանները, հարեւան պետությունների կողմից ռազմական միջամտության վտանգը, ինչպես նաեւ կոնկրետ իրավիճակային գործոններ` կապված առանձին նշանակված անձանց հետ, ներառյալ նրանց բնակության վայրը եւ նախորդ գործունեությունը: Այս դրվագն իր պատշաճ պատմական եւ իրավական շրջանակում տեղադրելը թույլ է տալիս Դիանա Աբգարի դերը գնահատել ճշգրիտ` առանց չափազանցման եւ միաժամանակ առանց դրա նշանակությունը նսեմացնելու:

**-Քչերը գիտեն, որ Դիանա Աբգարը նաեւ գեղարվեստական գործեր է գրել` արձակ եւ չափածո: Ժամանակին կարդացել եմ նրա «Սյուզան» վեպը, որն ինքնակենսագրական բնույթ ունի եւ հնդկահայերի մասին եղած սակավաթիվ գեղարվեստական գործերից է: Անդրադարձե՞լ ես նաեւ նրա գեղարվեստական ժառանգությանը:**

-Այո՛, Դիանայի գրական ստեղծագործություններն ուսումնասիրել եմ նրա քաղաքական եւ մարդասիրական գրությունների հետ համատեղ: Էսսեների եւ հրապարակային գործունեության կողքին նա ստեղծել է նաեւ արձակ եւ չափածո գեղարվեստական գործեր, որոնք կազմում են նրա մտավոր ժառանգության կարեւոր, սակայն հաճախ անտեսված մասը:

Նա գրել է գեղարվեստական երկու արձակ գործ: Գրական ձեւով ներկայացված` դրանք հաստատորեն հիմնված են այն սոցիալական միջավայրերի վրա, որոնք Աբգարը լավ էր ճանաչում` արտացոլելով հայ համայնքների եւ գաղութային ժամանակաշրջանի հասարակությունների իրականությունը: Դրանք թեեւ խիստ իմաստով ինքնակենսագրական չեն, խորապես ձեւավորված են նրա անձնական փորձով եւ դիտարկումներով:

Ձեր հիշատակած «Սյուզանն» առանձնանում է իր ուժեղ ինքնակենսագրական երանգով եւ, ինչպես նշեցիք, այն սակավաթիվ գեղարվեստական գործերից է, որ ներկայացնում են հնդկահայ փորձառությունը «ներսից»: Հերոսուհին` Սյուզանը, բազմաթիվ ընդհանրություններ ունի հենց Դիանայի հետ: Սակայն պետք է նշել, որ, ամենայն հավանականությամբ, Դիանայի հարաբերությունները մոր հետ շատ լավ են եղել` ի տարբերություն Սյուզանի: Այս ստեղծագործությունը, պատմական փաստագրում լինելու փոխարեն, արժեքավոր պատկերացում է տալիս հուզական կյանքի, սոցիալական նորմերի եւ գենդերային փորձառության մասին, որոնք բացակայում են պաշտոնական աղբյուրներում:

Ես ուսումնասիրել եմ նաեւ Աբգարի «Պատերազմի տնային պատմություններ» ժողովածուն, որը գտնվում է գեղարվեստական գրականության, վկայության եւ բարոյական խորհրդածության սահմանագծին: Այս պատմողական ուրվանկարները, գրված ընթերցող լայն հանրության համար, ներկայացնում են պատերազմի մարդկային գինը` առօրյա կյանքի միջոցով, կենտրոնանալով հատկապես կանանց ու երեխաների ճակատագրերի վրա: Երկու դեպքում էլ պատմությունները վկայում են իրենց ժամանակի եւ միջավայրի իրականությունների հետ սերտ ու գիտակցված առնչության մասին:

⇨5

# Կոմիտասի «Բեռլինյան պատարագը» հնչեց Երեւանի պետական կամերային երգչախմբի կատարմամբ

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ



«Բեռլինյան պատարագը» Կոմիտաս Վարդապետի վաղ շրջանի ստեղծագործություններից է: Այն մեծ երգահանի, բանահավաքի, գիտնականի թողած անտակ ժառանգության այն էջերից է, որ քչերին է հայտնի: Եվ ահա «Բեռլինյան պատարագը» երաժշտասեր հանրությանը ներկայացնելու գործը ստանձնել է Երեւանի պետական կամերային երգչախումբը: Այս ստեղծագործությունն առաջին անգամ նույն երգչախմբի կատարմամբ ունկնդրել եմ շուրջ վեց տարի առաջ, երբ ամփոփվում էր կոմիտասյան հոբելյանական տարին: Ծանոթ-անծանոթ Կոմիտասի հետ այդ հանդիպումը տպավորիչ էր: Թվում էր՝ ամեն ինչ ասված էր նրա մասին, բայց ոչ... Դրա վկայությունն է այն հայտնությունը, որ ես, գոնե ինձ համար, կատարեցի այդ օրը: Այս երաժշտական երկը դեռ 20-րդ դարասկզբին պետք է կատարվեր Եվրոպայում, բայց ինչ-ինչ հանգամանքների բերումով, ոնց աղբյուրներն են վկայում, չէր հնչել բեռլինյան բեմերից: Հայաստանում այն եւս երաժիշտների ուշադրությունից «վրիպել էր»: Բայց չի անտեսվել Երեւանի պետական կամերային երգչախմբի կողմից, որ բեմից հնչեցնելով սույն գործը՝ մի մեծ «բաց» է լրացրել՝ Կոմիտասի արվեստը գնահատողներին, հայ լայն հանրությանը մեծ բեմից ներկայացնելով այն: Անդավաճան երգչախմբի՝ կոմիտասյան ժառանգությունը ներկայացնելու եւ հանրահռչակելու ուղղությամբ ի սկզբանե ձեւավորված եւ տարիներ հաստատված ավանդույթին՝ Երեւանի պետական կամերային երգչախումբը **Քրիստինա Ոսկանյանի** ղեկավարությամբ օրերս դարձյալ հնչեցրեց «Բեռլինյան պատարագը»: Վերջինս, լինելով երգչախմբի գեղարվեստական ղեկավարն ու խմբավարը, բավական հարուստ եւ բազմազան ծրագրերով է ներկայանում Հայաստանում, նաեւ արտերկրում: Տպավորությունը կոմիտասյան ստեղծագործությունից այնպիսին է, որ գերմաներենով հայոց հոգեւոր երգեցողություն է հնչում. սա Կոմիտասի, այսպես ասած, նախամուտքն էր, ստեղծագործական ընթացքը՝ դեպի մեզ հայտնի մեծատաղանդ պատարագի արարումը: Հոգեւոր նուրբ հունչ ունի գործը, կառուցված է արդեն ի հայտ եկած վարպետությամբ, հանճարի կնիքը կա նրանում: «Բեռլինյան պատարագը» սփոփիչ հունչ ունի եւ, ասես, բուժարար է հոգեխորավ հոգիների համար:



Նույնպիսի հոգեհունչով էին լեցուն համերգային երեկոյին հնչած մնացած երկերը, որ պատկանում են **Ֆրանսիս Պուլենկին, Օլիվիե Մեսսիանին, Փոլ Միլորին, Վահրամ Սարգսյանին**: Կանադահայ երաժիշտ, երգչախմբային դիրիժոր, Հայաստանի Կոմպոզիտորների եւ Երաժշտագետների Միության անդամ, Եվրոպական Երգչախմբային ասոցիացիայի խորհրդատու Վահրամ Սարգսյանի երաժշտական երկերը, մասնագետների բնորոշմամբ, պարունակում են հայ միջնադարյան հոգեւոր երաժշտության տարրեր՝ ընդլայնված վոկալ տեխնիկայով: Նա ծնվել է Երեւանում, կոմպոզիցիա եւ խմբավարություն սովորել Երեւանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում՝ Ա. Զոհրաբյանի եւ Տ. Հեքեքյանի դասարաններում, Մոնրեալի Մաք Գիլի համալսարանում ուսանել Ֆիլիպ Լերուի դասարանում: Օքսֆորդի համալսարանի հրատարակչության պատվերով դեռ ուսանողական շրջանում մշակել է միջնադարյան «Խորհուրդ Մեծ» շարականը, որը կատարվել է BBC Singers երգչախմբի կողմից: Նրա ստեղծագործությունները հնչել են աշխարհի մի շարք հանրահայտ հարթակներում, արժանացել է Ջուլ Լեժեի մրցանակին, CALQ-ի «Տարվա արտիստ» կոչմանը Լավալում:

Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը կայացած համերգն ամփոփվեց Վահրամ Սարգսյանի վերը հիշատակված «Խորհուրդ Մեծ» ստեղծագործությամբ, դրանով եւս մի անգամ ընդգծվեց ծրագրի հոգեւոր բնույթը եւ համերգային մտահղացման բովանդակային ամբողջականությունը:

# Հայկական ֆիլմը Յոթեբորգի փառատոնում

Շվեդական կենտրոնական «Դագենս նյուհեթեր» («Օրվա նորություններ») օրաթերթում **Ֆրեդրիք Սահլինը** «Սյուռռեալիզմը ծաղկում է ճշմարտություն որոնող Յոթեբորգի փառատոնում» հոդվածում անդրադարձել է նաեւ Շվեդիայի այդ հեղինակավոր կինոփառատոնում ներկայացված ամերիկաբնակ բեմադրիչ **Հայկ Մաթեւոսյանի** «Որոր լեռների համար» կինոնկարին (Հայաստան-ԱՄՆ): Հատկանշական է, որ այս վավերագրության գործադիր արտադրիչն է վերջերս վախճանված հունգարացի մեծանուն կինոբեմադրիչ **Բելա Տառը**: Ֆիլմի առաջնախաղը տեղի է ունեցել անցած տարի, հունիսին, Անգլիայի Շեֆիլդ քաղաքում կայացած վավերագրական կինոյի միջազգային փառատոնում:



«Սյուռռեալիստական միտումն աճում ու ծաղկում է իմ ոլորապտույտ ճանապարհին՝ փառատոնի կինեմատոգրաֆիկ ջունգլիներում,- գրել է Ֆրեդրիք Սահլինը:- Ինչպես, օրինակ, հայկական «Որոր լեռների համար» ֆիլմում այն խորհրդածում է կրոնի եւ բնության հետ մարդու հարաբերության մասին: Համենայն դեպս, ամեն ինչ սկսվում է այրվող թփից, եւ բոլոր նրանք, ովքեր թեկուզ մակերեսային կերպով ծանոթ են Հին կտակարանին, գիտեն, թե դա ինչ է նշանակում. Աստված խոսում է բոցավառվող թփի միջոցով (Աստվածաշնչի ամենախրթին փոխաբերություններից մեկը): Ֆիլմը կազմված է բանաստեղծական պատկերներից, որտեղ մի ծեր եկեղեցական փայլում է տափաստանում՝ ձիերի, քարե սալերի (նկատի ունի խաչքարերը - Ա. Բ.), գերեզմանների եւ վանքերի ավերակների միջով: Ոչ մի երկխոսություն, մշուշոտ պատկերներ եւ սրբազան հնչյունային շարք: Մեղմ ասած՝ առեղծվածային մի ստեղծագործություն»:

«Որոր լեռների համար»-ը բեմադրիչի առաջին լիամետրաժ կինոֆիլմն է: Մինչ այդ Լոս Անջելեսում բնակվող Հայկ Մաթեւոսյանը նկարահանել էր «Խաղացողը» (2013) եւ «Անցորդը» (2017) խաղարկային կարճամետրաժ ֆիլմերը (երկուսն էլ՝ ամերիկյան արտադրության), իսկ 2019-ին եղել է տարբեր երկրների այն 15 բեմադրիչների մեջ, որոնք Բելա Տառի ղեկավարությամբ ստեղծել են առանձին կարճամետրաժ ֆիլմեր՝ խմբավորված «Աստծո ներքո. մաս 2» կինոնկարում:

Ա. Բ.

# Մելինե Մեսրոպյան. Հայկական հետքեր ճապոնական արխիվներում եւ նոր բացահայտումներ Դիանա Աբգարի մասին

⇨4

**-Մելինե՛, եւ վերջում նշեմ, որ այս տարվա աշնանը կլրանա 15 տարի, ինչ բնակվում ես Ճապոնիայում, որտեղ կազմել ես ընտանիք: Հաջողվո՞ւմ է հայկականության դասեր տալ զավակիդ:**

-Հայ ինքնությունը որդուս փոխանցելը մի բան է, որը փորձում եմ անել դպրոցական կյանքի եւ բազմալեզու միջավայրի իրականության մեջ: Ամուսինս՝ Ջերեմի Սեպտեմբերը, Հարավային Աֆրիկայից է. տնտեսագետ է, դասավանդում է Հյոգոյի համալսարանում: Նա մեր որդու հետ անգլերեն է խոսում, ճապոներենն էլ, բնականաբար, գերիշխում է նրա առօրյա կյանքում, ուստի եւ որդուս ծնունդից ի վեր ես գիտակցված որոշում եմ կայացրել նրա հետ միայն հայերեն խոսել: Ես փորձում եմ հետեւողականորեն օգտագործել հայերեն բառեր, նույնիսկ ռուսական ազդեցության տակ գտնվող արտահայտությունները փոխարինել համապատասխան հայերեն համարժեքներով, երբեմն փնտրելով բառեր, որոնք հազվադեպ ենք օգտագործում առօրյա խոսքում:

Որդուս հայերենը, բնականաբար, զիջում է ճապոներենին եւ անգլերենին, հատկապես հաշվի առնելով հայերեն մանկական բովանդակության սահմանափակ լինելը, բայց ընթերցանությունն ու պատմությունները մեզ համար կենտրոնական են մնում: Նա սիրում է Անահիտի եւ Հայկ Նահապետի պատմությունը, գուցե ոչ պատահականորեն, քանի որ իր անունը Հայկ է: Ես չեմ սպասում, որ հայկական ինքնությունը հեշտությամբ ի հայտ կգա նրա մեջ. կարեւորը սերմը ցանելն է, որպեսզի մի օր նա իմանա, թե որտեղից է գալիս եւ ազատ զգա՝ վերադառնալու դրան իր ձեւով...

**ՍՈՒՐԵՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**

**Միջազգայնագետ, ԱՄՆ արտաքին քաղաքականության փորձագետ**

# Թրամփ-Ալիեւ հանդիպումը եւ Վենսի այցելությունը

Դեկտեմբերի վերջերին դիմատետրի (facebook) իմ էջում գրել էի, որ շուտով Հայաստան է այցելելու ԱՄՆ-ի պատմության մեջ ամենաբարձրաստիճան մի անձնավորություն, եւ չնայած չէի բացահայտել, թե ով է լինելու այդ պաշտոնյան, շեշտել էի, որ նման մակարդակի այցելություն երբեք տեղի չէր ունեցել: Դա լինելու էր պատմական մի այցելություն, քանի որ մինչ այդ ՀՀ այցելած ամերիկացի ամենաբարձրաստիճան պաշտոնյաները եղել էին Ներկայացուցիչների պալատի խոսնակն ու պետքարտուղարության երկու ներկայացուցիչները՝ **Ջեյմս Բեյքրն** ու **Հիլարի Քլինթոնը**:

Ոչ հայկական, ոչ էլ ամերիկյան կողմը չհերքեց փոխնախագահի **Ջ. Դ. Վենսի** այցելության վերաբերյալ լուրը, ինչը նշանակում է, որ իմ հաղորդած տեղեկությունը ճշգրիտ էր: Միայն օրեր անց Մ. Նահանգների նախագահ **Դոնալդ Թրամփն** իր սոցցանցում գրառում կատարեց այն մասին, որ նախապատրաստական աշխատանքներ են կատարվում փոխնախագահի Վենսի ոչ միայն Հայաստան, այլ նաեւ Ադրբեջան այցելության ուղղությամբ: Որքան ինձ հայտնի է, Ադրբեջան այցը նախապես ծրագրված չէր: Ակնկալվում էր, որ Վենսը կայցելի միայն Հայաստան եւ մասնավորապես Սյունիքի շրջան, որտեղ ընթացքի մեջ է այսպես կոչված «Թրամփի ուղին»:

Պարզվեց, որ Թրամփի սոցցանցերում գրառումից մի քանի օր առաջ Դավոսում տեղի էր ունեցել Թրամփի հանդիպումը Ադրբեջանի նախագահ **Իլհամ Ալիեւի** հետ, որից անմիջապես հետո Թրամփն իր «Truth» սոցցանցում հայտարարեց. «Մենք ամրապնդելու ենք մեր ռազմավարական գործընկերությունը Ադրբեջանի հետ, միջուկային խաղաղ համագործակցության գեղեցիկ համաձայնություն (ենք կնքելու) Հայաստանի հետ, գործարքներ ենք իրականացնելու մեր երկրի կիսահաղորդիչներ պատրաստող մեծ ընկերությունների հետ եւ «Պատրաստված է ԱՄՆ-ում» պաշտպանական սարքավորումներ (ինչպես, օրինակ, զրահապատ հանդերձանք եւ այլ իրեր) ենք վաճառելու Ադրբեջանին»:




Հատկանշական էր, որ Թրամփը հանդիպում չունեցավ **Փաշինյանի** հետ, որն այդ օրերին Դավոսում էր գտնվում: Տպավորությունն այն է, որ քննարկելու ոչինչ չէր մնացել: Բոլոր գլխավոր հարցերն արդեն կարգավորված էին: Թրամփի հայտարարությունը չափազանց հստակ էր: Նա ընդգծված տարբերություն էր դնում հայ-ամերիկյան եւ ամերիկա-ադրբեջանական հարաբերությունների միջեւ: Վաշինգտոն-Բաքու հարթակում հայտարարությունն ուղղակիորեն նշում էր համագործակցության կոնկրետ ոլորտներ՝ ամրապնդել ռազմավարական գործընկերությունը, վաճառել պաշտպանական հանդերձանք, ընդարձակել անվտանգության համագործակցությունը, եւայլն: Ինչ վերաբերում է Հայաստանին, համագործակցության առաջարկված հարթակը միջուկային ոլորտն է, մասնավորապես փոքր չափսի նոր մոդուլար միջուկային կայանների տեխնոլոգիաներ, որոնց մասին քննարկումներ կատարելու առիթը ունեցել եմ: Նշեմ, սակայն, որ նույնիսկ ամերիկյան արհեստավարժ շրջանակների եւ փորձագետների մոտ այն տպավորությունն է, որ այդ տեխնոլոգիաները դեռ հետագա բարելավման կամ կատարելագործման կարիքն ունեն, նախքան լայնածավալ գործադրումը կամ տեղակայումը:

Օրինական հարց է առաջանում, թե ինչո՞ւ է Հայաստանը խուսափում զենք, զինամթերք կամ այլ ռազմական տեխնոլոգիաներ ձեռք բերել ԱՄՆ-ից, ինչպես Ադրբեջանն է անում: Եթե Հայաստանը կարող է Ֆրանսիայից եւ Հնդկաստանից ձեռք բերել, ինչո՞ւ ԱՄՆ-ից չի կարողանում նույնը կատարել, որպեսզի հարաբերությունները Վաշինգտոնի հետ բարձրացնի ռազմավարական մի նոր, ավելի բարձր մակարդակի: ԱՄՆ-ի օրենսդրությունը եւ թղթաբանությունը, ճիշտ է, բավական բարդ է նման գործարքների համար, բայց այդ խոչընդոտները հաղթահարելի են:

Կայանալիք բարձրաստիճան այցելությունը հետապնդում է երկու գլխավոր նպատակ: Նախ ամրապնդել Մ. Նահանգների դիրքերը Հարավային Կովկասում, մի բան, որ նրան չէր հաջողվել կատարել Խորհրդային Միության տապալումից ի վեր, մի շարք քաղաքական հարկադրանքների պատճառով: Այս իմաստով հիմնական նպատակը Մ. Նահանգների ռազմավարական շահերի առաջխաղացումն է Կենտրոնական Ասիայից սկսած մինչեւ Հարավային Կովկաս ձգվող աշխարհաքաղաքական ընդգրկուն տարածքներում: Երկրորդ, այցելությունը նաեւ անձնական նշանակություն ունի նախագահ Թրամփի համար, այն իմաստով, որ իր անունը կրող նախագծի հետ է առնչվում: Թրամփի համար իր նախաձեռնության իրականացումը սերտորեն կապված է միջազգային ճանաչում ձեռք բերելու նրա փառասիրության, մասնավորապես խաղաղության Նոբելյան մրցանակ ստանալու հետ, որը միաժամանակ ներքին քաղաքական ուղերձ է պարունակում՝ բարձրացնելու համար նրա անձնական «բրենդը»: Երկու դեպքում էլ սցենարը գործող եւ մրցունակ կարելի է համարել՝ համապատասխան նպատակների հետապնդման տեսակետից: Սակայն, հակառակ որ Մ. Նահանգների փոխնախագահի այցելությունը կրում է դիվանագիտական բնույթ, այն Մ. Նահանգներ-Հայաստան հարաբերությունների կամ հայ-ամերիկյան օրակարգային հարցերի որեւէ արմատական փոփոխություն կամ նշանակալի ամրապնդում չի նախատեսելու: Առանց երկկողմանի քաղաքական, անվտանգային եւ ռազմավարական շահերի որոշակի հենքի, Հայաստանը մնալու է տարածաշրջանային դինամիկայի պասիվ դերակատարը՝ անկախ հնչող բարձրագոչ հայտարարություններից եւ խորհրդանշական սիրալիրություններից:

Միեւնույն ժամանակ, եթե Հայաստանը իսկապես հնարավորություն եւ ցանկություն ունի ռազմավարական հարաբերություններ հաստատելու Մ. Նահանգների հետ, ապա օգտվելով այս այցելությունից եւ ԱՄՆ-ի համընդհանուր ակտիվությունից ու տարածքային դինամիկայից, Հայաստանը պարտավոր է անհապաղ զարգացնել բազմաբնույթ հարաբերություններ Մ. Նահանգների հետ, հատկապես այն բնագավառներում, որոնցում երբեք չի խորացրել համագործակցությունը: Այլապես «Թրամփի ուղին» կարող է մնալ սոսկ որպես բիզնեսի ներկայություն տարածաշրջանում, առանց որեւէ ռազմավարական նշանակության կամ հեռահար տեսլականի:

**Անգլ. բնագրից թարգմանեց՝**
**ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**
**(The Armenian Mirror-Spectator)**

# Հայ եկեղեցւոյ դէմ հալածանքը վարչապետին գլխաւորութեամբ կը գրաւէ միջազգային կառոյցներու լուրջ ուշադրութիւնը

⇨3

*«Ի՞նչը կ երաշխաւորէ, որ նոյնը պիտի չպատահի Արցախէն բռնի տեղահանուած հայորդիներուն հետ»* իր հարցը եզրափակեց **Սեւակ Յակոբեանը**: Պատասխանելով հարցումին Զուիցերիոյ Ազգային խորհրդարանի անդամը ափսոսանքով յայտնեց, որ նման երաշխաւորութիւններ չկան, սակայն իրենք ամէն բան պիտի ընեն, որ մարդկային այդ ողբերգութիւնը չկրկնուի արցախահայոց պարագային: Այս մասին Դոկտ. Էյբնըրն ալ միջամտեց, խստագոյն բառերով դատապարտելով Հայոց Ցեղասպանութիւնը:

***«Գերմանիոյ մէջ քրիստոնեաները այսօր մտահոգ են այն իրավիճակով, որ կը պատահի Հայ Առաքելական Եկեղեցւոյ հետ Հայաստանի մէջ».*** Իր հերթին հաստատեց, Հայաստանի մէջ կրօնական ազատութեան եւ մարդկային իրաւունքներու պաշտպանութեան վիճակին վերաբերեալ մամլոյ ասուլիսին հրաւիրուած, CSI-ի անդամ՝ գերմանացի կաթոլիկ քահանայ Հայր **Փիթըր Ֆուքսը**:





***«Միջազգային իրաւունք չկայ, որ չսահմանափակուեցաւ ՀՀ իշխանութեանց կողմէ՝ եկեղեցւոյ դէմ արշաւի ընթացքին».*** հաստատեց **Ռաֆայէլ Իշխանեանը**:

*«Իշխանութեանց կողմէ եկեղեցւոյ եւ անոր սպասաւորներուն դէմ տարուող արշաւը յաճախ կը մեկնաբանուի իբրեւ հակամարտութիւն երկու կողմերուն միջեւ, ինչը հաւասարութեան նշան կը դնէ, մրցակցութեան պատրանք կը ստեղծէ, մինչդեռ ասիկա այդպէս չէ»*,- մամուլի ասուլիսի ընթացքին այսպիսի կարծիք յայտնեց Քաղաքական Իրաւունքներու Հայկական Կեդրոնի (ՔԻՀԿ) նախագահ Ռաֆայէլ Իշխանեանը: Ան ներկայացուց փաստահաւաք առաքելութեան արդիւնքները ու նշեց. *«Մի կողմէ՝ պետութիւնը ունի ահռելի պետական ապարատ, ուժի գործադրութեան բացարձակ մենաշնորհ, ուժային կառոյցներու գործողութիւնները կառավարելու մենաշնորհ: Միւս կողմէ, եկեղեցին մէկ միաւոր կրօնական կազմակերպութիւն է, հետեւաբար իշխանութեան կողմէ տարուող արշաւի եւ եկեղեցւոյ գործողութիւններուն միջեւ հաւասարութեան նշան չի կարելի դնել»*: Ըստ Ռաֆայէլ Իշխանեանի, առաջին հայեացքով դիտարկումը այն էր, որ իշխանութեան, ի դէմս վարչապետին, արշաւը ուղղուած էր առանձին գործիչներու դէմ, յետագային՝ երկրորդ հարթութեան վրայ տեսանելի էր, որ ասիկա ուղղուած է եկեղեցւոյ դէմ. *«Երբ վարչապետը օրակարգ բերաւ Կաթողիկոսին փոխելու հարցը, նաեւ հաւատացեալներուն իրաւունքներուն վրայ ասիկա անդրադարձաւ: Գիտենք, որ քաղաքացիներուն կարեւոր միջոցառումները ուղղակիօրէն կապուած են եկեղեցւոյ գործունէութեան հետս»*: Ըստ Ռաֆայէլ Իշխանեանի՝ հաւանաբար չենք գտներ միջազգային համաժողովներում սահմանուած մէկ իրաւունք, որ չսահմանափակուեցաւ կամ չխախտուեցաւ ՀՀ իշխանութիւններուն արշաւին ընթացքին. *«Անձնական ազատութեան, արդար դատաքննութեան իրաւունքը, կալանքները ամենէ յաճախ գործածուող միջոցներն են: Արդար դատաքննութեան իրաւունքի խախտում տեսած էինք նոյն Սրբազան պայքարին անդամներուն գործին մէջ, փաստերու մանիպուլեացիա, գաղտնալսումներ, որոնք մոլորեցնում են մէկ ամբողջ հանրութիւն՝ ստեղծելով պատկեր, թէ խումբին անդամները ունէին հանրութեան նկատմամբ բռնութիւն գործադրելու նպատակ: Էլ չեմ ըսեր անմեղութեան կանխավարկածին ամբողջովին անտեսումը»*:

*****

Իր տեսակին մէջ այս եզակի ու շնորհակալ այցելութիւնն ու հնչեցուած խօսքերը ցնցիչ էին: Թէ ինչպիսի պատասխան պիտի տան միջազգային հանրութեան աչքին՝ իրենց արարքներով վարկաբեկուած ՀՀ իշխանութիւնները, դեռ յայտնի չէ, բայց մինչ այդ, սոյն մամլոյ ասուլիսին արձագանգները բարձր կը հնչեն ու լսուին թէ՛ մեր հայրենիքին, թէ՛ աշխարհին մէջ:

**Քաղուած՝ «Զարթօնք»-ի յատուկ տեղեկագրութենէն**

ՏԻՐԱՏՈՒՐ ՔՀՆ. ՍԱՐԴԱՐՅԱՆ

Բադենվյուրթեմբերգի հայ համայնքի հոգեւոր հովիվ

# Եկեղեցու եւ պետության սահմանները Հայաստանում

## *Երբ իրավական միջամտությունը սպառնում է հոգեւոր ինքնավարությանը*

### Ներածություն

Վերջին ամիսներին Հայաստանում արձանագրվող զարգացումները՝ առնչվող Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, անցել են սովորական քաղաքական կամ վարչական գործընթացների սահմանը: Դրանք այլեւս չեն կարող դիտարկվել որպես առանձին իրավական միջադեպեր: Իրենց ամբողջության մեջ այդ քայլերը վկայում են պետության կողմից եկեղեցու ներքին ինքնավարության նկատմամբ համակարգային ճնշման մասին, մի երեւույթ՝ որը լուրջ հարցեր է առաջացնում թէ՛ սահմանադրական իրավունքի, թէ՛ միջազգային ժողովրդավարական չափանիշների տեսանկյունից: Եպիսկոպոսների եւ քահանաների ձերբակալությունները, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաժարականի հրապարակային պահանջները, «եկեղեցու բարեփոխման» կամ «մաքրման» գաղափարների պետական հռետորաբանության մեջ շրջանառությունը, ինչպես նաեւ եկեղեցու կանոնական եւ ծիսական կյանքի մեջ ուղղակի կամ անուղղակի միջամտությունները կուլմինացան 2026 թվականի հունվարի 29-ին հարուցված քրեական վարույթով: Այս իրավիճակը պահանջում է սթափ, իրավական եւ սկզբունքային գնահատական:



### Եկեղեցին՝ որպես ինքնավար աստվածամարդկային հաստատություն

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին առաքելական եկեղեցի է, հիմնադրված Սուրբ Թադեոս եւ Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների կողմից: Նրա ներքին կարգը ձեւավորվել է դարերի ընթացքում՝ հիմնվելով առաքելական հաջորդականության, տիեզերական եկեղեցու կանոնների եւ հայ ազգային ժողովների որոշումների վրա: Ուղղափառ եկեղեցաբանության համաձայն, եկեղեցին պարզապես հասարակական կազմակերպություն չէ: Այն աստվածամարդկային իրականություն է, որի ներքին կառավարման համակարգը չի կարող ենթարկվել աշխարհիկ իշխանության վերահսկողությանը: Եկեղեցու գործող կանոնադրության 61-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ թեմակալ առաջնորդը նշանակվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից եւ հանդիսանում է նրա ներկայացուցիչը: Նույն տրամաբանությամբ միայն Վեհափառ Հայրապետն ունի իրավասություն անհրաժեշտության դեպքում նրան պաշտոնից հետ կանչելու: Սա վարչական լիազորություն չէ, այլ խորապես աստվածաբանական բնույթի իշխանություն: Երբ աշխարհիկ դատարանը կամ պետական մարմինը փորձում է վերանայել կամ չեղարկել այդ որոշումները, տեղի է ունենում ուղիղ միջամտություն եկեղեցու սրբազան կառուցվածքին: Ավելին, եկեղեցական ներքին կարգապահական հարցերի փոխանցումը աշխարհիկ դատարանի քննությանը հակասում է ուղղափառ կանոնական ավանդությանը եւ դիտվում է որպես հնազանդության ուխտի խախտում: Այս իմաստով 2026 թվականի հունվարի 27-ին Գերագույն հոգեւոր խորհրդի կողմից ընդունված կարգալուծության որոշումը լիովին համապատասխանում է եկեղեցական իրավունքի նորմերին:

### Պետություն եւ եկեղեցի. համագործակցություն, ոչ ենթակայություն

Հայաստանի Հանրապետության պետական-եկեղեցական հարաբերությունները կառուցված են համագործակցության, բայց ոչ ենթակայության սկզբունքի վրա: «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքը հստակորեն ճանաչում է եկեղեցու ինքնակառավարումը իր նվիրապետական իշխանության սահմաններում: Սա նշանակում է, որ պետությունը չունի իրավասություն միջամտելու եկեղեցու ներքին կառավարման, կարգապահական կամ հիերարխիկ հարցերին: Երբ պետական մարմինները կիրառում են դատական կամ քրեական գործիքակազմ՝ եկեղեցական որոշումների գործադրումը խոչընդոտելու կամ դրանց չկատարումը քրեականացնելու նպատակով, նրանք դուրս են գալիս օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակից: Հայրապետական տնօրինությունները քաղաքացիական կամ վարչական դատավարության առարկա չեն: Դրանց հակառակ մեկնաբանությունը փաստացի վերացնում է եկեղեցու ինքնակառավարման իրավունքը եւ հակասում է կրոնական կազմակերպությունների՝ պետությունից անջատ լինելու սահմանադրական պահանջին:

### Սահմանադրական պաշտպանություն եւ վտանգավոր նախադեպ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը երաշխավորում է կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը եւ հստակ սահմանում է եկեղեցու եւ պետության անջատվածությունը: Այս սկզբունքները վերահաստատվում են նաեւ «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» օրենքով, որը բացառում է պետության միջամտությունը եկեղեցու ներքին կյանքին: Եկեղեցական կարգապահական որոշումների նկատմամբ դատական վերահսկողության փորձերը խախտում են ոչ միայն կրոնական ազատությունը, այլեւ միավորվելու ազատությունը: Դրանք ստեղծում են վտանգավոր նախադեպ, ըստ որի պետությունը կարող է փաստացի վերահսկել եկեղեցու ներքին հարաբերությունները՝ հակասելով սահմանադրական չեզոքության սկզբունքին:

Այս միջամտությունները հատկապես անընդունելի են այն պարագայում, երբ խոսքը վերաբերում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, որի բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում ամրագրված է Սահմանադրության 18-րդ հոդվածով:

### Միջազգային իրավունքի տեսանկյունից

Միջազգային իրավունքը միանշանակ պաշտպանում է կրոնական համայնքների ինքնավարությունը: Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը եւ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան երաշխավորում են ոչ միայն հավատքի ազատությունը, այլեւ կրոնական կազմակերպությունների ներքին ինքնակազմակերպման իրավունքը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը բազմիցս հաստատել է, որ աշխարհիկ դատարանները իրավասու չեն քննելու հոգեւորականների կարգապահական հարցերը: Այդպիսի գործերը, որպես կանոն, ճանաչվել են անընդունելի՝ հենց եկեղեցու ինքնավարությունը պաշտպանելու նպատակով: Այս համատեքստում միջազգային իրավաբանական վերլուծությունները հետզհետե արձանագրում են, որ Հայաստանում տեղի ունեցող գործընթացները համակարգային վտանգ են ներկայացնում եւ հակասում են ինչպես երկրի Սահմանադրությանը, այնպես էլ եվրոպական ժողովրդավարական չափանիշներին:

### Եզրակացություն

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եպիսկոպոսները փաստում են. թեմակալ առաջնորդի նշանակումն ու պաշտոնից ազատումը բացառապես կանոնական իրավունքի ոլորտում են եւ չեն կարող լինել պետական կամ դատական վերահսկողության առարկա: Եկեղեցական կարգապահական իշխանության իրացման համար քրեական կամ քաղաքացիական պատասխանատվության ենթարկելը խախտում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, Սահմանադրությունը եւ միջազգային պարտավորությունները: Միջազգային դատական պրակտիկան միանշանակորեն պաշտպանում է եկեղեցու ինքնավարությունը:

Այս իրողությունների լույսի ներքո վերջին ամիսներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ նրա գահակալի դեմ ձեռնարկված քայլերը, այդ թվում՝ Մասյացոտնի թեմի առաջնորդի փոփոխության եւ Գեւորգ եպիսկոպոս Սարոյանի կարգալուծության դատական վիճարկումը, ինչպես նաեւ քրեական վարույթի հարուցումը, առաջացնում են հիմնավոր կասկած, որ գործընթացը միտված է նաեւ փետրվարի 16-19-ին Ավստրիայում նախատեսված եպիսկոպոսական ժողովի խափանմանը:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին շարունակելու է իր հոգեւոր առաքելությունը հայ ժողովրդի ծառայության մեջ՝ վստահ լինելով, որ իրավունքը, Սահմանադրությունը եւ միջազգային նորմերը չեն կարող երկարաժամկետ անտեսվել:

---

# «Քրիստոնյա Հայ սփյուռքի իրավիճակը մեր օրերում» համաժողովն ավարտվեց Բուդապեշտում

⇨1 Համաժողովի կազմակերպիչը **Նիկողոս Հակոբյանն** էր՝ Հունգարիայի Ազգային ժողովում հայ համայնքի խոսնակը: Համաժողովն անցավ Հունգարիայի Ազգային ժողովի նախագահ **Լասլո Քյովերի** եւ Հունգարիայի փոխվարչապետ **Ժոլտ Շեմյենի** հովանու ներքո: Ներկաներին ողջունեցին Ազգային ժողովի փոխնախագահ **Լայոշ Յանոշը** եւ Հունգարիայում ՀՀ դեսպան **Հայկակ Արշամյանը**: Այնուհետեւ Հունգարիայի, Չեխիայի, Լիբանանի, Շվեդիայի, Իտալիայի, Ավստրիայի, Եթովպիայի, Սիրիայի, Քուվեյթի, Կիպրոսի, Թուրքիայի, Լեհաստանի, Ուկրաինայի, Ռումինիայի, Հորդանանի հայկական համայնքների մասին զեկուցումներով հանդես եկան հրավիրյալ բանախոսները:

Ժամանակի սղության պատճառով քննարկումների համար ժամանակ չմնաց, սակայն ընդմիջումների ընթացքում մասնակիցները կարողացան քննարկել իրենց հուզող հարցերը, նաեւ շփվել համաժողովին ներկա ինչպես հունգարահայերի, այնպես էլ հայաստանցիների ու արցախահայերի հետ, որոնք արդեն բնակվում են Բուդապեշտում: Համաժողովը հիմնականում ուներ տեղեկատվական նշանակություն, հասկանալու, թե ինչ վիճակում են գտնվում հայկական սփյուռքի հին ու նոր համայնքները, եւ որոնք են այսօրվա մարտահրավերները: Համաժողովի ելույթներում հնչեցին



նաեւ սփյուռքի ինքնակազմակերպման առաջարկներ: Նշվեց մասնավորապես, որ վերջին շրջանում ամենուր ահագնացել է ձուլումը, Միջին Արեւելքում կամ Ուկրաինայում նաեւ՝ արտագաղթը, իսկ ընդհանուր խնդիրներից են մնում լեզվի, կրթության եւ համայնքային կյանքի աշխուժացման հարցերը: Իհարկե, խոսվեց նաեւ համայնքներում հայկական քրիստոնեական ժառանգության, դրա պահպանման, Հայ եկեղեցու դերի եւ ազգանվեր գործունեության մասին:

Հուսանք, որ բարձրացված հարցերը ժամանակի ընթացքում կստանան լուծումներ, ինչն էլ կլինի նման համաժողովի անցկացման կարեւոր արդյունքը:

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ
Բուդապեշտ

